# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 15 | Քանակեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Բաճկոնը կանաչ գույնի կիսաբրդյա կտորից է. մետաքսե աստառով. կտորի երանգը՝ համաձայնեցվում է Գնորդի հետ: Կտորի բաղադրությունը՝ 44% բուրդ. 54% պոլիէստեր. 2% լայկրա. կտորի խտությունը՝ 235 գրամ մ2: Բաճկոնը բաղկացած է մեջքից. օձիքից. թևքերից և լանջափեշերից. որոնք միացվում են շղթայով: Բաճկոնը առաջամասից կրկնակարվում է սոսնձապատ գործվածքով: Առանձին հատվածները (գրպանների կափույրներ. օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձապատ գործվածքով: Կրծքամասի երկու կողմերում տեղադրված են կպչունակով կոճկվող. ուղղանկյուն կափույրով արտաքին գրպաններ: Փեշամասում տեղադրված են ներկարված շղթայով կոճկվող երկու թեք գրպաններ: Մեջքը՝ վերին կտրվածքով. թևքերը՝ միակար թեզանիքներով և կտրվածքով: Թեզանիքները կոճկվում են երկու մետաղական ոսկեգույն կոճակով: Բաճկոնը գոտիով է. կողքերից՝ էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում՝ ոսկեգույն կոճակով ամրակներ: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան. հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Տաբատը նույն բաճկոնի կտորից է՝ կողային երկու ներկարված գրպանով. հետևի մասում ունի մեկ գրպան՝ կափույրով: Տաբատն առջևի մասում կոճկվում է |

| | | |
|---|---|---|
| | | կայծակաճարմանդով: Տաբատը կողքերին ունի մեկ նեղ (2 մմ) կարմիր գունաժապավեն: Տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմանները և հանդերձանքի նկարները ներկայացված են կից` հավելված 1-ում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 15 | | |